ՊԱՅՄԱՆԱԳԻՐ թիվ 6/26
(ծառայությունների մատուցման վերաբերյալ)

ք. Երևան «01» հուլիսի 2026թ.

«Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկը, ի դեմս տնօրենի պաշտոնակատար Գրիշա Հովհաննիսյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ՀՀ քաղաքացի Լիլիթ Հակոբյանը (այսուհետև՝ Կատարող) մյուս կողմից, կնքեցին վճարովի ծառայություններ մատուցելու վերաբերյալ սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է վարձատրության դիմաց մատուցել հետևյալ Ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություն).

1.1 Պատրաստի և տեղադրի համապատասխան նյութեր «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի վեբ կայքում,

1.2 Պատրաստի նյութեր լաբորատորիաների ստեղծման ընթացքի և արդյունքների, ինչպես նաև ուսուցիչների վերապատրաստումների վերաբերյալ,

1.3 Պատրաստի մամուլի հաղորդագրություններ,

1.4 Կատարի այլ առաջադրանքներ կապված հանրային կապերին վերաբերող աշխատանքների և տեղեկատվության տարածման հետ:

2. Ծառայության արժեքը սահմանվում է ամսական 165.000 (մեկ հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ եկամտային հարկը և պարտադիր վճարները:
3. Ծառայության համար վարձատրվում է այն մատուցելու վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրությունը Կատարողի կողմից ներկայացնելու և այն երկկողմանի ստորագրելուց (Պատվիրատուի կողմից նաև կնքելուց) հետո՝ յոթ բանկային օրվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով Կատարողի կողմից տրամադրված բանկային հաշվին փոխանցելու միջոցով:
4. Կատարողը պետք է ամեն ամիս հաշվետվություն ներկայացնի «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի տնօրենին:
5. Հաշվետվությունը պետք է ներառի տվյալ ամսվա ընթացքում կատարված աշխատանքների մանրամասն նկարագրությունը և պատրաստված նյութերը պետք է կցվեն հաշվետվությանը:
6. Պատվիրատուն հանդիսանում է Կատարողի հարկային գործակալը:
7. Այն դեպքում, երբ Ծառայությունների մատուցումը անհնարին է կողմերից անկախ հանգամանքների պատճառով, Պատվիրատուն վճարում է Կատարողին նրա կողմից փաստացի մատուցված Ծառայության դիմաց:
8. Պայմանագրով չկարգավորվող կողմերի հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

9. Պայմանագիրը կարող է միակողմանի, առանց պարտավորությունների առաջացման հետևանքների, լուծվել Պատվիրատուի կողմից՝ մեկ շաբաթ առաջ գրավոր ծանուցելով Կատարողին այդ մասին:
10. Պայմանագիրը կարող է միակողմանի, առանց պարտավորությունների առաջացման հետևանքների, անհապաղ լուծվել Պատվիրատուի կողմից, եթե Կատարողը սույն պայմանագրով նախատեսված կարգով չի կատարել կամ անպատշաճ է կատարել իր պարտավորություններից որևէ մեկը:
11. Մինչև Պայմանագրի լուծելը կատարված և Պատվիրատուի կողմից հավանության արժանացած աշխատանքների վարձատրության չափը սահմանվում է կողմերի համաձայնությամբ:
12. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և գործում է մինչև ծրագրի ավարտը:
13. Պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակներից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Պատվիրատու	Կատարող
«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ պետական հիմնարկ	Լիլիթ Հակոբյան Հասցե՝ ք. Երևան, Ավան, Ծարավ Աղբյուրի փ., շ. 55/5, բն.309 Անձնագիր N՝ AT0668638 Տրված՝ 15.02.2021թ 006-ի կողմից ՀԾՀ՝ 7911760489
ՀՎՀՀ՝ 02550991 **Գործունեության վայրի հասցե՝** ՀՀ, ք.Երևան, Ս. Վրացյան 73 **Բանկ՝** ՀՀ գանձապետարան	**Բանկ՝** «ԱՅ-ԴԻ ԲԱՆԿ» Փ ԲԸ հ/հ՝ 11815032921700
Հ/Հ՝ 900011046670 **Հեռ.՝** 010-57-56-90	
Տնօրենի պաշտոնակատար՝ Գրիշա Հովհաննիսյան	Լիլիթ Հակոբյան